ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ԴՐԱՄԱՇՆՈՐՀԻ ՁԵՎՈՎ ՏՐԱՄԱԴՐՎՈՂ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ԳՈՒՄԱՐՆԵՐԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՄԱՍԻՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ N1/23

Քաղ. Երևան 08. 02. 2023 թ.

Հայաստանի Հանրապետության Պաշտպանության նախարարությունը (այսուհետ՝ Նախարարություն) ի դեմս Սուրեն Պապիկյանի, որը գործում է նախարարության կանոնադրության հիման վրա, մի կողմից և մյուս կողմից «Ռազմատեխնիկական գիտահետազոտական ինստիտուտ» ՊՈԱԿ-ն ի դեմս տնօրեն Մարտին Կարապետյանի, որը գործում է կազմակերպության կանոնադրության հիման վրա, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Կառավարության 2018թ. մայիսի 11-ի N559-Ա որոշումը՝ կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. Պայմանագրի առարկան

1.1 Սույն պայմանագրով Նախարարությունը պարտավորվում է ծրագրի իրականացման նպատակով պայմանագրի 5.1 կետով սահմանված կարգով հատկացնել ՀՀ 2023թ. պետական բյուջեի N1169 «ՀՀ պաշտպանության ապահովում» ծրագրի 11006 «Գիտահետազոտական և փորձակոնստրուկտորական աշխատանքների գիտատեխնիկական (ռազմատեխնիկական) ուղեկցում» միջոցառման համար նախատեսված 76,000.000 դրամը, համաձայն 29.12.2022թ. №2111-Ն, ՀՀ 2023թ. բյուջեի կատարումն ապահովող միջոցառումների մասին կառավարության որոշման №9 հավելվածի,

1.2 Ծրագրով նախատեսված՝ կազմակերպության կողմից իրականացվելիք միջոցառումները(այսուհետ՝ միջոցառում) ներկայացված են սույն պայմանագրի հավելվածում:

2. Կողմերի իրավունքները և պարտականությունները

2.1. Նախարարությունն իրավունք ունի՝

2.1.1 ցանկացած ժամանակ (այդ թվում՝ ՀՀ ֆինանսների նախարարության միջոցով)ստուգելու կազմակերպության կողմից իրականացվող միջոցառումների ընթացքը և որակը՝առանց միջամտելու վերջինիս գործունեությանը,

2.1.2 սահմանված պայմաններին չհամապատասխանելու դեպքում չընդունելու իրականացված միջոցառումները՝ իր հայեցողությամբ սահմանելով թերությունների անհա-

տույց վերացման ողջամիտ ժամկետ և կազմակերպությունից պահանջելու վճարել սույն պայմանագրի 6.2 կետով նախատեսված տուգանքը,

2.1.3 առանց իրականացված միջոցառումների արդյունքների դիմաց գումար տրամադրելու միակողմանի լուծելու սույն պայմանագիրը և պահանջելու հատուցել պատճառված վնասները, եթե.

ա. կազմակերպությունը ժամանակին չի սկսում ծրագրի իրականացումը, կամ ծրագրի իրականացման ժամանակ ակնհայտ է դառնում, որ այն պատշաճ՝պայմանագրով սահմանված կարգով և ժամկետներում չի իրականացվելու,

բ. կազմակերպությունը երկու և ավելի անգամ խախտել է ծրագրով նախատեսված առանձին միջոցառումների իրականացման ժամկետները (միջոցառումների իրականացման ժամկետներ նախատեսված լինելու դեպքում),

գ. իրականացված միջոցառումները չեն համապատասխանում ծրագրով սահմանված պահանջներին,

2.1.4 սույն պայմանագիրը << օրենսդրությամբ կամ սույն պայմանագրով նախատեսված հիմքերով լուծելու դեպքում պահանջելու իրեն հանձնել անավարտ միջոցառումների արդյունքները:

2.2. Կազմակերպությունն իրավունք ունի.

2.2.1 իրականացված միջոցառման արդյունքը նախարարության կողմից ընդունվելու դեպքում պահանջելու վճարել իրեն հասանելիք գումարը,

2.2.2 Նախարարության կողմից գումարները չվճարելու դեպքում միակողմանի լուծելու սույն պայմանագիրը և պահանջելու հատուցել իրեն պատճառված վնասները:

2.3. Նախարարությունը պարտավոր է.

2.3.1 ծրագրով նախատեսված դեպքերում աջակցել կազմակերպությանը,

2.3.2 կատարել ծրագրի (առանձին միջոցառումների) իրականացման մոնիթորինգ՝ անհրաժեշտության դեպքում համագործակցելով այլ պետական կառավարման մարմինների հետ,

2.3.3 իրականացնել ծրագրով նախատեսված այլ աշխատանքներ,

2.3.4 իրականացված միջոցառման մասին ներկայացված կատարողական հաշվետվությունների վերաբերյալ համապատասխան որոշում ընդունել 4.2 կետում նշված ժամկետում:

Եթե ներկայացված հաշվետվությունների համաձայն իրականացված միջոցառումը համապատասխանում է ծրագրի և սույն պայմանագրի պահանջներին, ապա դրանք ընդունվում են:

2.4. Կազմակերպությունը պարտավոր է.

2.4.1 իրականացնել ծրագրի շրջանակներում Նախարարության կողմից տրամադրված գումարների՝ Հայաստանի Հանրապետության հաշվապահական հաշվառման №20 ստանդարտի դրույթներին համապատասխան հաշվառում,

2.4.2 պայմանագրով նախատեսված ֆինանսական միջոցներն օգտագործել ծրագրով և (կամ) սույն պայմանագրով սահմանված նպատակներով ու չափաքանակներով,

2.4.3 կատարել նախարարության կողմից բացահայտված թերությունների վերացման նպատակով տրված ցուցումները,

2.4.4 սույն պայմանագրով սահմանված կարգով Նախարարությանը ներկայացնել միջոցառումների իրականացման մասին հաշվետվություններ, իսկ ծրագրի ավարտից հետո՝ ամփոփ հաշվետվություն՝ համաձայնեցված ՀՀ ԶՈՒ գլխավոր շտաբի պետի հետ,

2.4.5 սույն պայմանագրի գործողության ընթացքում ապահովել ծրագրի իրականացմանը վերաբերող փաստաթղթերին ծանոթանալու նախարարության հնարավորությունը՝ վերջինիս կողմից գրավոր պահանջ ստանալու օրվանից 5 աշխատանքային օրվա ընթացքում,

2.4.6 Նախարարության կողմից առանձին միջոցառումների իրականացման մասին հաշվետվությունները չընդունվելու դեպքում կազմակերպությունը պարտավորվում է անվճար՝ նախարարության կողմից սահմանված ողջամիտ ժամկետում վերացնել արձանագրված անհամապատասխանությունները,

2.4.7 ծրագրի կատարման համար անհրաժեշտ ապրանքների, աշխատանքների և ծառայությունների ձեռքբերում իրականացնել «Գնումների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքին համապատասխան,

2.4.8 պայմանագրով սահմանված միջոցառումների տարեկան արդյունքները թերակատարելու դեպքում,դրա արդյունքում առաջացած գումարները վերադարձնել ՀՀ պետական բյուջե՝ մինչև տվյալ բյուջետային տարվա նախավերջին աշխատանքային օրը:

3. Մոնիթորինգը

3.1 Նախարարությունը ծրագրի իրականացման նախնական, ընթացիկ և վերջնական արդյունքների համապատասխանության գնահատման նպատակով իրականացնում է մոնիթորինգ:

3.2 Մոնիթորինգը իրականացվում է նախարարության և (կամ) նրա կողմից լիազորված անձի կողմից:

3.3 Մոնիթորինգի իրականացման ընթացքում բացահայտված թերացումների ու բացթողումների շտկման նպատակով կազմակերպությանը տրվում են ցուցումներ և կատարվում են առաջարկություններ:

3.4 Նախարարությունը ցանկացած ժամանակ կարող է ծրագրի շրջանակներում իրականացնել մոնիթորինգ՝ ուսումնասիրելով ծրագրին առնչվող ցանկացած փաստաթղթեր և նյութեր:

3.5 Մոնիթորինգի իրականացման ընթացքում կազմակերպությունից կարող են պահանջվել գրավոր և բանավոր պարզաբանումներ և բացատրություններ:

4.Պայմանագրի արդյունքի հանձնման և ընդունման կարգը

4.1 Պայմանագրի արդյունքն ընդունվում է նախարարության և կազմակերպության միջև հանձնման–ընդունման ակտի ստորագրմամբ:

4.2 Կազմակերպության կողմից իրականացված միջոցառման մասին ներկայացված կատարողական հաշվետվությունների վերաբերյալ Նախարարությունը համապատասխան որոշում է ընդունում դրանք ստանալու օրվանից 20 աշխատանքային օրվա ընթացքում: Եթե ներկայացված հաշվետվությունների համաձայն իրականացված միջոցառումը համապատասխանում է ծրագրի և սույն պայմանագրի պահանջներին, ապա դրանք ընդունվում են սույն պայմանագրի 9.4 կետով սահմանված ստորաբաժանման կողմից, ընդ որում պետական մարմինը հաշվետվությունն ընդունելու դեպքում եռօրյա ժամկետում գրավոր ծանուցում է կազմակերպությանը:

4.3 Եթե իրականացված միջոցառումը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Նախարարությունը չի ստորագրում հանձման-ընդունման ակտը և եռօրյա ժամկետում Կազմակերպությանը վերադարձնում է հանձման-ընդունման ակտը՝ նշելով դրա չստորագրման համար հիմք հանդիսացած անհամապատասխանությունները: Սույն կետի կիրառման դեպքում Նախարարությունը

ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Կազմակերպության նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

4.4 Եթե պայմանագրի 4.2 կետով սահմանված ժամկետում Նախարարությունը չի ընդունում պայմանագրի 4.1 կետում նշված փաստաթղթերը կամ 4.3 կետով սահմանված ժամկետում չի մերժում դրա ընդունումը, ապա իրականացված միջոցառումը համարվում է ընդունված և 4.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Նախարարությունը Կազմակերպությանը տրամադրում է իր կողմից ստորագրված հանձման-ընդունման ակտը:

5. Վճարման կարգը և ժամկետները

5.1 Կազամակերպությանը ֆինանսական հատկացումները կատարվում են 2023թ. ՀՀ պետական բյուջեի 1169 «ՀՀ պաշտպանության ապահովում» ծրագրի 11006 «Գիտա-հետազոտական և փորձակոնստրուկտորական աշխատանքների գիտատեխնիկական (ռազմատեխնիկական) ուղեկցում» միջոցառման համար, տնտեսագիտական դասակարգ-ման «Ընթացիկ դրամաշնոհներ պետական և համայնքների ոչ առևտրային կազմա-կերպություններին» հոդվածով նախատեսված միջոցների հաշվին՝ համաձայն 29.12.2022թ. 2111-Ն ՀՀ 2023թ. բյուջեի կատարումն ապահովող միջոցառումների մասին կառավարության որոշման N9 հավելվածի, սահմանված եռամսյակային համամասնու-թյուններին համապատասխան ներկայացված ֆինանսավորման հայտերի հիման վրա:

6. Կողմերի պատասխանատվությունը

6.1 Կազմակերպությունը պատասխանատվություն է կրում սույն պայմանագրով ստանձնած պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման համար:

6.2 Պայմանագրի հավելվածում նշված ծրագրին չհամապատասխանող պարտավորություն իրականացնելու յուրաքանչյուր դեպքում կազմակերպությունից գանձվում է տուգանք՝պայմանագրի 1.1 կետում նախատեսված գումարի 0,5(զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով:Ընդ որում տուգանքը հաշվարկվում է նաև պայմանագիրը սահմանված ժամկետներում կատարելու,սակայն նախարարության կողմից չընդունվելու,ինչպես նաև հաշվետվությունները պայմանագրով սահմանված ժամկետներում չներկայացնելու դեպքերում:

6.3 Պայմանագրով նախատեսված ծրագրի կատարման ժամկետը խախտելու դեպքում կազմակերպությունից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար

գանձվում է տույժ՝ պայմանագրի 1.1 կետում նախատեսված գումարի 0.05(զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.4 Պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսվածտուգանքը և տույժը հաշվարկվում և հաշվանցվում են միջոցառման իրականացման արդյունքում կազմակերպությանը վճարման ենթակա գումարների հետ:

Տույժը հաշվարկվում է աշխատանքային օրերով՝ պայմանագրի չկատարված մասի գնի նկատմամբ:

6.5 Պետական մարմնի կողմից պայմանագրի 4.1 կետով նախատեսված ժամկետի խախտման դեպքում պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացած աշխատանքային օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0.05(զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու դեպքում պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

6.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

7. Պայմանագրի գործողության ժամկետը

7.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև բյուջետային տարվա ավարտը:

8. Անհաղթահարելի ուժի ազդեցությունը (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

8.1 Պայմանագրով նախատեսված պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներն են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրության հայտարարումը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարումը: Եթե անհաղթահարելի ուժի ազդեցությունը շարունակվում է

3 ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծելու պայմանագիրը՝ դրա մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին: Ընդ որում, եթե անհաղթահարելի ուժը ծագել է կազմակերպության մոտ և վերջինիս նախաձեռնությամբ պայմանագիրը լուծվում է, ապա կազմակերպությունը նախարարությանը վերադարձնում է անհաղթահարելի ուժի ծագման օրվա դրությամբ պայմանագրի համաձայն կազմակերպությանը փոխանցված գումարը՝ չկատարված պարտավորության մասով:

9. Եզրափակիչ դրույթներ

9.1 Պայմանագրում կատարվող փոփոխությունները կամ լրացումներն իրավաբանական ուժ ունեն, եթե կազմված են գրավոր և ստորագրված են կողմերի կողմից:

9.2 Պայմանագիրը կնքվում է երկու օրինակներով, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

9.3 Պայմանագրով նախատեսված պարտավորությունների չկատարման հետ կապված, ինչպես նաև սույն պայմանագրով չնախատեսված հարաբերությունները կարգավորվում են Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ:

9.4 Սույն պայմանագրով նախատեսված նախարարության իրավունքներն ու պարտականություններն իրականացնում է ՀՀ ԶՈՒ գլխավոր շտաբի պետը, իսկ կատարված միջոցառումներն ընդունում է ԶՈՒ ԳՇ օպերատիվ գլխավոր վարչության պետ-ԳՇ պետի տեղակալը:

9. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

ՀՀ պաշտպանության նախարար	**«ՌՏ ԳՀԻ» ՊՈԱԿ-ի տնօրեն**
Ս. ՊԱՊԻԿՅԱՆ	**Ա. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ**
«08» 02 2023թ.	«03» 02 2023թ.
	գանձապետարանի հհ 900018007469
Երևան, Բագրևանդ 5	Երևան, Բագրևանդ 5

Հավելված

20 թ._____ ____ - ին

կնքված N _____պայմանագրի

Պետության կողմից դրամաշնորհի ձևով ֆինանասական աջակցության գումարների օգտագործման՝ ՀՀ պաշտպանության նախարարության և ռազմատեխնիկական գիտահետազոտական ՊՈԱԿ-ի միջև կնքված պայմանագրի

ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ

Հ/հ	Իրականացվելիք միջոցառումը					
	Անվանումը	Համառոտ բովանդակությունը	Կատարման ենթակա գործառույթների նկարագիրը	Ակնկալվող արդյունքները և դրանց գնահատման չափանիշները	Վերջնաժամկետը	Պահանջվող գումարը (դրամ)
1.	ԳՀ և ՓԿ աշխատանքների ռազմագիտական ուղեկցում (6 աշխատանք): Միավորի արժեքը՝ 3 566 666, 67				մինչև 2023թ. ավարտ	21,400,000
1.1	Գիտահետազոտական աշխատանքների ռազմատեխնիկական ուղեկցում *	հաշվետու գիտատեխնիկական փաստաթղթերի մշակմանն աջակցության ցուցաբերում (ելեկտրային տվյալների կամ բնութագրերի տրամադրում)	ՀԳՏՓ մշակման նպատակով գիտատեխնիկական քննարկումների և անհրաժեշտության դեպքում փորձաքննության կազմակերպում և համապատասխան նյութերի տրամադրում կատարողին	պատվիրատուի ն առաջարկի ներ-կայացում՝ ՓԿԱ վերաբերյալ կատարողի հետ պայմանագիր կնքելու (չկնքելու) նպատակով		
1.2	Փորձակոնստրուկտորա-	ՓԿԱ կատարման	ՓԿԱ կատարման համար	Կատարողին ելակետային		

	կան (ՓԿ) աշխատանք-ների ռազ-մատեխնի-կական ուղեկցում	էսքիզային (տեխնիկա-կան) նախա-գծի մշակ-ման համար աջակցու-թյան ցուցա-բերում, (ելա-կետային տվյալների կամ բնութա-գրերի) տրա-մադրում, մասնակցու-թյուն փոր-ձարկումնե-րին	անհրաժեշտ տվյալների մշակում, փոր-ձարկումների ծրագիր մեթոդիկայի համաձայնեցում	կամ խորհրդատվա կան նյութերի տրամադրում, փորձար-կումների անց-կացման արձանագրու-թյուն		
2.	Սցենարների (մոդելների) մշակում				Մինչև 2023թ. ավարտ	13 000 000
		1. Հետազո-տությունների և վերլու-ծությունների իրականա-ցում	1. Տեխնիկական զարգացման վերլուծություն 2. ՀՀ ԶՈՒ պա-հանջարկի վեր-լուծություն 3. Ժամանակա-կից ռազմական կոնֆլիկտների ուսումնասիրութ յուն	Իրականացվա ծ աշխատանքնե րի գնահատման հաշվետվությու ն (0 աշխատանք): Միավորի արժեքը՝ 4 300 000		0
		2. Սցենարի մտահղաց-ման մշա-կում և համաձա-յնեցում	Էսքիզային նա-խագծի մշակում շահագրգիռ ստորաբաժանմ ան հետ և հա-մաձայնեցում ԶՈՒ ԳՇ ՕԳՎ հետ	Համաձայնեցմ ան ներկայացված մտահաղացում (էսքիզ) (1 աշխատանք): Միավորի արժեքը 7 000 000		7 000 000
		3. Սցենարի փաս-տաթղթերի ձևավորում և	Մոդելի ուրվա-գծի կազմում, բացատրագրի ձևակերպում	Հաստատման ներկայացված սցենար (2 աշխատանք):		6 000 000

		հաստատում	փաստաթղթա-յին կամ էլեկտրոնային տարբերակով	Միավորի արժեքը՝ 3 000 000		
3.	Նոր սպառազի-նության և ռազմական տեխնիկայի (ՍՌՏ) մարտավա-րատեխնի-կական (տեխնիկա-կան) առա-ջադրանքներ (ՄՏԱ,ՏԱ)	1. ԳՀ և ՓԿԱ մարտավա-րատեխնի-կական առաջա-դրանքի (ՄՏԱ, ՏԱ-ներ) մարտավա-րատեխնի-կական բնու-թագրերի (ՄՏԲ) մշակ-ում և ՄՏԱ, ՏԱ կազմում	Նմանատիպ ՍՌՏ մարտա-վարատեխնի-կական առաջա-դրանքի (ՄՏԱ, ՏԱ-ներ) մար-տավարատեխ-նիկական (տեխնիկական) բնութագրերի ուսումնասիրում, համադրում՝ կի-րառման խնդ-իրներին շահագրգիռ ստորաբաժա-նումների հետ համատեղ և ներկայացում ՀՀ ՋՈՒ ԳՇ պետի հաս-տատմանը	Հաստատամա-նը ներկայացված ՄՏԱ (ՏԱ-ներ) տրամադրում՝ կատարողների հետ պայմա-նագիր կընքե-լու նպատակով (8 աշխա-տանք): Միավորի միջին արժեքը՝ 5 200 000	Մինչև 2023թ. ավարտ	41 600 000
Ընդամենը պահանջվող գումար՝ 76 000 000 դրամ						

* հնարավոր է, որ աշխատանքները լինեն ինչպես ՓԿ և ԳՀ այնպես էլ՝ միայն ՓԿ կամ ԳՀ, մեկ տարվա հաշվարկով: